ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հոկտեմբերի 2012թ. թիվ 205-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. սեպտեմբերի 13-ի «Անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 1202-Ա որոշման 7-րդ կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ 728-Ն հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

Լոռու մարզի տարածքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. սեպտեմբերի 13-ի թիվ 1202-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 9
ք.Վանաձոր